

տարեւոր ժամանակ Տապանը և մէջինները ջրի վրայ պահեց, «Նաւակաց պահեալ»։ Բայց որովհետեւ համատարած ծովի երեսին Նաւակայք չկար, ուր Խարխիսի ձգէր և անշարժ կայներ, և ոչ դէկ մը որ ընթացքը ուղղէր, ուստի. Իրնդ. է 18. Կ'ըսէ «յուէր Տապանն ի վրայ ջրոց. ուրեմն եռակուց չէր ըստ մտաց Հորոյի»։ Իսկ մեր ուղղագրութիւնն համաձայն էր նաև Սողոմոնի իմաստութեան Գրքի Ժ. 4. «Վասն որոյ և զհեղեղեալ երկիր՝ միւսանգամ փրկեաց իմաստութիւն» չնչին փայտիև արգարոյն Նաւակետեայ, այսինքն Նաւակաց պահեալ. հոս անշուշտ Navigateurի և Navigationի իմաստն ունի. Ինչ Կ'ըսէ տիւրացու Հորոն։

ԺԲ և Ի ուղղագրութեանցս մասին գրածներն շաղկապփութիւնը են և չարժեն պատասխանի։

Հ. Գ. ՆԱԼԱԳԵՏԵԱՆ

## ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

### Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմավէպ, 1924 էջ 169)

ԺԵ. ԵՒ ԺԶ.

### ԲԺՇԿԱՐԱՆ ԱՄԻՐՏՈՒՎԱԹԱՅ

Ամիրտուվաթ Ամասիացի բժշկին բուրբ գործերը պարունակող ձեռագիր մ'է այս, երկու մեծազանգուած հատորներ, որոնց առաջինը (օգուտ թշկուարեանն է և Ախրապատիւնը, իսկ երկրորդը Անգիտաց Անպիտը։

Սկիզբը և վերջը կը կարդացուին բուն Ամիրտուվաթի գրած Յիշատակարանները, զորս տեսանք արդէն վերեւ նշանակուած ձեռագիրներու ուսումնասիրութեան առթիւ։

Ա. Հատորը կաշէկազմ, լաւ պահուած, ունի 27, 5 հարիւրորդամեղը մեծութիւն, 20 հարիւրորդամեղը լայնութիւն, և 4 հարիւրորդամեղը թանձրութիւն։ Թուղթը

բամբակեայ է, գիրը նոսր, երկսին՝ բայց ոչ գեղեցիկ. կը բաղկանայ 250 թերթէ, 500 էջ գրութեամբ, և կը կրէ՝ Ս. Ղազարու ձեռագիր մատենաներու 1712 թուահամարը։

Այս Հատորին մէջ չկայ ընդօրինակութեան թուականը, բայց ամենավերջին էջին վրայ կը գտնուի ստացողին մէկ Յիշատակարանը, որ է՝

« Բուսոյժոմիս քրիսթին համարոյէ ԵՃ « (500) երեսէ ԲՃԾ (250) բուխր է, և որ « հոնդիպիք այս պատասխան գրոյս որ մին « է ըստայցոմ և միտս է մարքիտին, « հոգեմէի տեղամ. և որ հոնդիպի այս « գրգրուս, յիշեցէք սեփաստիայցի քէլ Ներ. « սեւեց բոս. Յակոբի որդի տիրացոս փա. « հոսէ և որդուն յակոբիկին և յամեն. յա. « ինեմկո՞ յիշեցէք մի հայր մեր, և որ « յիշէ յիշայ յիցի Քրիստոսի, աստուծոյ « մերոյ ամեն »։

Սոյն Յիշատակարանէն Կ'իմանանք, որ բժշկարաններս, որուն մէկ Հատորին համար միայն Սոսանման անունը կու տայ (Անգիտաց Անպետն է այս) և միւսին Միսֆրիտոր (օգուտ բժշկութեանը), վերաբերած է Քէլ-Ներսէսեանց թոռ Սիրաս. տացի Տիրացու Փանոսին, որ իր ամե. նախակ ու սխալ գրութեամբ Կ'արձանագրէ վերագրեալը։

Սոյն Յիշատակարանին վերջը կը դնէ իր ստորագրութիւնը ընդեւզեալ գրերով Ստեփանոս, և վրան 1117 տաճկագիր թուականը, որ անշուշտ Հայկականն ըլլալու է և կը համապատասխանէ 1737 թուականին։

\*

Բ. Հատորը կազմով, գրով և չափով չի տարբերիր առաջինէն, միայն թէ կը բաղկանայ 245 թերթէ՝ 488 էջ գրութեամբ, և կը կրէ՝ 1713 թուահամարը։ Անգիտաց Անպետն է սա, որուն վերջը գրուած է Ամիրտուվաթի ծանօթ ոտանաւոր Յիշատակարանը, և անմիջապէս վարը կը կարդացուի ընդօրինակութեան թուականը և տեղը ու գրիչին անունը՝ այսպէս,

« Արդ աստիտեցաւ թշկաց պիտեանի  
« գիրքս որ կոչի անվամբ մոփրատար, ի  
« ինկոյոյ Տէր Գրիգորի որդի Ղազարի բա-  
« հաւիրի եւ ձարտար թշկացեանի, որ ետուր  
« գրել զպատասխան գիրքս այս վայելումն  
« իւր անձինն. ի թիվն. Հայոց ՌձձԲին ի  
« քաղաքն Սեբաստիայ ձեռամբ կիրակոսի  
« հոստատի եւ անպիտան ընթերցողի: Արդ  
« սիրելիք իմ, անմեղադիր լեր սղարանաց  
« խոնգ զի կար մեր այսքանն եւ եւ որ կար-  
« թայք կամ օրինակք յիշէք ի մարբափայլ  
« յաղօթս ձեր զի եւ դոք յիշեալ յիշիք ի  
« Գրիտոսոս Աստուծոյ մերմէ ամեն »:

Կարեւոր է արդարեւ այս Յիշատակա-  
րանը, ուրկէ կը տեղեկանանք թէ այս  
Երկհատոր թշկարանն ընթերցանուած է  
Սեբաստիա քաղաքին մէջ ՌձձԲ (1172 |  
551) == 1723ին կիրակոս անուն դպիր  
մը ձեռքով, եւ կ'ուսանինք նաեւ թէ այդ  
քաղաքին մէջ 18րդ դարու սկիզբը ապրած  
է, ՂԱԶԱՐ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՆԸ անուն բժիշկ  
մը, որ իրեն համար ամփոփ գրել կու տայ  
Ամբրոսի վարժի գործերը:

Սեբաստիա այսպէս 17-18 դարուն  
խկական օրրանն մը կ'ըլլայ Հայ բժիշկ-  
ներու, Ասար, Պունեսթ եւ Ղազար Սե-  
բաստացիներու, որոնք եթէ չըլլային՝ շատ  
բան անծանօթ մնացած պիտի ըլլար Հայ  
բժշկական պատմութեան:

Սոյն Յիշատակարանովս կ'աւարտի Ձե-  
ռագրս, որուն ամենավերջին էջին վրայ,  
դարձեալ քէլ-Ներսէսեան փանոս կը գրէ  
Յիշատակութիւն մը այսպէս.

« Ի վայելումն քննիչսեանց թոս հոդ եւ  
« փոշի, մեղսպարտ եւ քրիստոսի ծառայ  
« փառնոյ, եւ որ հանդիպի այս պատմական  
« գրգոյս, որ է մարմնակեր, կարգալով կամ  
« օրինակելով, յիշեցէք ի մայրքայփայլ յա-  
« ղօթս ձեր եւ մի հայր մեղափի մի, Հայր  
« իմ յակոբ եւ մայր իմ մարիամն եւ որդի  
« իմ յակոբձիկն եւ դոք յիշայ յիցիք ի  
« քրիստոսի աստուծոյ ամին »:

Յիշատակագրութեանն ներքեւ փանոս  
իր ստորագրութիւնը ընդելուզեալ կերպով

անգամ մ'ալ կը դնէ բայց աւելի խոշոր  
եւ նաեւ թրքագիր ՎՎՎ թուականը ու  
հետը՝ « տոնկոս » բառը, ուրկէ կարելի  
է հետեցնել, թէ այս Երկրորդ Հատորը  
գնած է նախ 1732ին իսկ առաջինն ալ  
1737ին:

Բժշկարանիս Հատորները ուրիշ նորու-  
թիւն մը չեն ներկայացներ, բայց Ամբր-  
տով վարժի միւս ձեռագիրներուն բաղդա-  
տութեանը ու ամբողջացմանը մեծապէս  
ծառայելու յարմար են:

ՏՕՔԹ. ՎԱՆԱՐ Յ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վեներաբլի — Ս. Ղազար

6 Յունուար 1923

(Շարունակելի)

## ՄՈՒՃԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱ ԳԱՆՈՐ

(Աղբ-գր-իւն - Պարտիւն - աստուծոյ - իւն)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 200)

### 6. Մուշիգան

Վերին - Փօնաքիցի դէպի հարաւ, մօտ կէս  
Փարսան հեռաւորութեամբ, մի ընդարձակ դաշ-  
տի վրայ կանգնած է հայաբնակ Մուշիգանը.  
դա Դուդուլու սարի մօտ ընկած, գեղեցիկ դիր-  
քով եւ զով ու առողջարար կլիմայով մի փոքրիկ  
գիւղ է, որի արեւմտեան եւ հարաւային կողմերը  
զարդարած են ուռնիքների եւ քիապուտաների  
տեղաբնաներով, իսկ արեւելեան կողմում փռւած  
է մի փոքրիկ պարտէզ:

Գիւղի հիմքը դրել է տասն եւ մէկ տարի ա-  
ռաջ, 1909 թիւն. բնակիչները եկել են Հայա-  
բնակ Մամուքա եւ Լիվաքեան գիւղերից, 1913  
թիւն, 24 տնով: Թէ ինչու է գիւղը Մուշիգան  
կոչւում, գիւղացիներն իրենց էլ չգիտեն: Այժմ  
տներն թիւն է 13, 60 հոգի չնչով, որի 35ը  
արական է եւ 25ը իգական. դրանից երկու տունը  
խօշընջին են: Տները մի յարկանի են, որոնցից  
մի մասը չինւած են իրար կողքի, իսկ մի մասը  
կառուցւած է առանձին - առանձին, շատերի  
առաջ կան փոքրիկ պարտէզներ: